



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ «ՅՈՂԵՒՈՐ ՉԱՐԹՕՆԸ» ԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՔԻՆ՝

**ԳԵՐՊ. ՄԻՒՌՆ Ծ. ՎՐԴ. ԱԶՆԻԿԵԱՆ ԹԵԼԱԴՐԵՅ ՀԱՍՏԱՏ ԵՒ ԱՆՇԵՂ
 ՊԱՅԵԼ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԴԱՄԱՆԱՆԸ
 ԵՒ ՀԱՅՐԵՐՈՒ ՀԱՄԱՏԸ**

Ազգային Առաջնորդարանի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան (Հ.Ա.Ե.Մ.) Կեդրոնական Վարիչ Մարմինի կրօնադաստիարակչական լսարաններու ամսական ձեռնարկը տեղի ունեցաւ Կիրակի, 14 Մայիս 2006-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ:

Հաւաքաբար Տէրունական աղօթքը արտասանելէ եւ նուագարաններու ընկերակցութեամբ փունջ մը հոգեւոր երգեր երգելէ ետք, հիւրընկալ եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Արտակ Քհնյ. ՏԵՄԻՐՃԵԱՆ ողջոյնի խօսք արտասանեց: Հ.Ա.Ե.Մ.ի ատենապետ Կրէկ Մարթայեան, ընդհանուր գիծերու մէջ ներկայացնելէ ետք Ազգ. Առաջնորդարանի հովանիին ներքեւ գործող երիտասարդաց միութեանց աշխատանքին պատկերը, կոչ ուղղեց երիտասարդութեան՝ աւելի գործօն մասնակցութիւն ցուցաբերելու եւ նոր անդամներ ներգրաւելու եկեղեցիներու երիտասարդական խմբակներէ ներս եւ գործնապէս սատարելու միութեան եկեղեցանուէր ու կրօնադաստիարակչական ծրագիրներուն:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Ազգ. Առաջնորդարանի քրիստոնէական դաստիարակութեան վարիչներէն՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, խօսելու եւ ներկայացնելու համար «Ս. կոյս Մարիամ՝ ըստ Հայց. Առաքելական եկեղեցւոյ վարդապետութեան» սիրօր: Գերայ. Հայր Սուրբը Եփեսոսի Տիեզերական Գ. Ժողովը (431) հիմք ունենալով, քաղուածաբար Աւետարաններէն, շարականներէն եւ եկեղեցական հայրերու գրութիւններէն, ներկայացուց Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը՝ շեշտելով Ս. կոյս Մարիամի Աստուածածին եւ Աստուածամայր ըլլալու յատկանիշները, եւ ոչ թէ մարդածին կամ Զրիստոսածին ըլլալը, ինչպէս կը վարդապետէր Նեստոր եւ կը մոլորեցնէր հաւատացեալները: Ըստ Նեստորի, Զրիստոսի մէջ կան մարդկային եւ աստուածային երկու անջատ բնութիւններ, որոնք իրարմէ անկախ կը գործեն: Նեստոր չէր ընդունէր Յիսուսի աստուածային ծագումը, Մարիամի Աստուածամայր ըլլալը եւ կ'ըսէր թէ ան Յիսուսի միայն մարդկային բնութեան ծնունդ տուած էր, իսկ աստուածութիւնը հետագային եկած ու բնակած էր անոր մէջ: Յիսուս որպէս կատարեալ մարդ՝ Մարիամէն ծնած էր, ուրեմն, Մարիամ Զրիստոսածին ու պարզ կին է եւ ո'չ Աստուածածին:

Ապա Հայր Սուրբը անդրադարձաւ Եփեսոսը կանխող Տիեզերական երկու ժողովներուն՝ Նիկիոյ (325) եւ Կ. Պոլսոյ (381) ժողովներուն տուն տուող

պատճառներուն, շեշտելով, որ Եկեղեցին, իր հաւատքի միութիւնը եւ վարդապետութիւնը խախտել փորձող բոլոր դարերու հերձուածողներու մոլար վարդապետութիւնները Առաքելներու եւ Աւետարանի լոյս ճշմարտութիւններով, փաստերով եւ պատմական վկայութիւններով ըմբերանեց, նզովեց ու ապա հռչակեց Նիկիական Ուղղափառ Հաւատամքը, որ ամէն Կիրակի պատարագի ընթացքին առաքելական եւ ուղղափառ եկեղեցիներու սուրբ խորաններէն հաւաքաբար կ'արտասանուի:

Չեկուցաբեր Հայր Սուրբը շեշտեց որ Տիեզերական երեք ժողովները եւ Նիկիական Դաւանանքը որպէս քրիստոնէական եկեղեցիներու, բայց մանաւանդ Առաքելական եւ Ուղղափառ եկեղեցիներու համար կը նկատուին պատմական, վարդապետական, դաւանաբանական եւ աստուածաբանական արժէք ներկայացնող հաւատքի կենդանի վկայութիւն եւ անփոխարինելի վաւերաթուղթ: Որովհետեւ՝ ինչպէս որ անցեալին քրիստոնէական եկեղեցւոյ կեանքը եւ ներքին միութիւնը խռովող հերետիկոսներ կը համարձակէին գանազան դրդապատճառներով հարցականի տակ առնել Քրիստոսի աստուածութիւնը, կամ Ս. Երրորդութեան Միաստուածութեան վարդապետութիւնը եւ քրիստոնէական Ուղղափառ մեր հաւատքը, Աւետարանի վաւերականութիւնը կամ եկեղեցւոյ հեղինակութիւնը, այսօր եւս քրիստոնէութիւնը եւ քրիստոնէական հաւատքը եւ եկեղեցւոյ կեանքը թունաւորող Dan Brown-ի նման շահատակ սոփեստներ եւ հերձուածներ կը համարձակին պատմական, ժամանակագրական ու ակետարանական ճշմարտութիւններ խեղաթիւրել եւ առասպելախառն հեքիաթներ ու երեւակայածին պատմութիւններ յօրինել, միշտ առաջնորդուելով ո՛չ թէ ճշմարտութիւններ քօղազերծելու բարի տրամադրութիւններով, այլ՝ զուտ անձնական փառքի, դրամի ու համբաւի անսանձ մոլուցքէ մտրակուած, սրբութիւններ ոտնակոխելով եւ հազարամեայ կառոյցներ եւ ականդութիւններ սրբապղծելով ու հաւատամքներ յերկրելով: Նման թունաւոր եւ անիծեալ հերձուածներ, ինչպէս անցեալին՝ ներկայիս ալ եկեղեցւոյ կողմէ միշտ նզովուած են եւ պիտի նզովուին: Բայց մենք յաճախ ըլլալով հետաքրքիր մեր շուրջի նորարարութիւններուն եւ մեզի պարտադրուած բազմաբնոյթ գաղափարներուն թէ աշխարհայեացքներուն՝ ակամայ կը տարուինք անոնցմով, որովհետեւ, ընդհանրապէս նման երեւոյթներու եւ վտանգներու դիմաց անպաշտպան ենք կամ գաղափար չունինք, ու պետք եղած անհրաժեշտ ու ճշգրիտ տեղեկութիւններ կը պակսին մեզի, իսկ այս պարագային՝ առաջին դարերու եկեղեցական պատմութեան եւ եղելութիւններուն անտեղեակ ենք:

Վիպասան ու արկածախնդիր Dan Brown-ի յօրինած The Da Vinci Code տխրահռչակ գիրքը, պատմական անճիշդ ցնդաբանութիւններով լեցուն, վիժած ուղեղի ցափռտանք է իր անմարսելի յերկրանքներով ու երեւակայածին տռամներով, նման Արիոսի, Մակեդոնի, Նեստորի, Գնոստիկեաններու, Մարկիոնականներու, Պաղիկեան, Մծղնեական, Երեւութական ու այլ բազում աղանդաւորականներու, հերձուածողներու եւ քրիստոնէական Առաքելական Ուղղափառ հաւատքէն ու Աւետարանի քրիստոսաւանդ վարդապետութենէն շեղած նզովեալներու:

Որպէս եզրակացութիւն, Հայր Սուրբը թելադրեց չգայթակղիլ, հաւատք չընծայել, չխոտորիլ, չմոլորիլ ու չտարուիլ նման նորելուկ երեւոյթներէն, միաժամանակ, ամուր եւ հաստատ պահելու համար քրիստոսահիմն եւ առաքելաշաւիղ ուղղափառ մեր հաւատքը՝ անհրաժեշտ է որ կարդանք,

ուսումնասիրենք պատմական, սուրբ գրային եւ եկեղեցագիտական նիւթերու, հարցերու եւ քրիստոնէական ուղղափառ վարդապետութեանց եւ ուսուցումներուն առնչուած մեր եկեղեցւոյ հարուստ գրականութիւնը, հաստատ եւ անշեղ պահելու համար հազարամեակներու վրայ հիմնուած մեր հաւատքը, եկեղեցւոյ դաւանանքն ու սրբազան աւանդութիւնները:

Հարց պատասխանի բաժինով ներկաներուն առիթ տրուեցաւ յաւելեալ տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ ունենալ, գոհացնելու համար անոնց հետաքրքրութիւնը: Իսկ քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, գնահատական եւ քաջալերական խօսքերով հանդես եկաւ Ազգ. Առաջնորդարանի երիտասարդաց միութեանց վարչութեան ամսական դրութեամբ կազմակերպած «Հոգեւոր Չարթօնք» դասախօսական օգտակար լսարաններուն մասին:

Երեկոյթը վերջ գտաւ «Թագաւոր Երկնաւոր գեկեղեցի քո անշարժ պահեա՛» երգով:

Ազգ. Առաջնորդարանի Հ.Ա.Ե.Մ.ի յաջորդ հաւաք-դասախօսութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի Յունիս 11, 2006, երեկոյեան ժամը 5-7, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ: Չեկուցաբերը պիտի ըլլայ Սօնա Յակոբեան, որ պիտի խօսի Ռիք Ուորընի «The Purpose Driven Life» գիրքին մասին:

PRELACY YOUTH DIRECTORATE COUNCIL'S THIRD RELIGIOUS-EDUCATIONAL GATHERING

On Sunday, May 14th, the Western Prelacy Armenian Church Youth Association's Directorate Council held the third lecture of its religious educational series at St. Mary's Armenian Apostolic Church in Glendale. Skeptics believed that the turnout would be low because of the Mother's Day celebrations, however the event was a major success. Mothers and daughters took part in the gathering as part of their Mother's Day activities, while several others joined the crowd as representatives from their respective churches and communities.

Opening remarks were made in Armenian by the Chair of the ACYA's Central Executive Committee, Gregory Krikor Martayan. He began by stating that "we live in a time in which young people stray from the church" and he continued, "we are here to connect our youth back to the Armenian Apostolic Church, the Church for which hundreds of thousands fought for and were martyred for." Martayan concluded his remarks by thanking His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate. "It is through the vision and guidance of our Serpazan that we are able to be so successful."

Mr. Martayan then invited to the stage Very Reverend Father Muron Aznikian, who delivered the message of the day in both Armenian and English. The Very Reverend Father spoke of the Virgin Mary and the holy doctrines of the Armenian Apostolic Church. His talk focused on the faith and convictions that we as Armenians of the Apostolic Church hold to be true. Throughout his lecture, Very Reverend Father Aznikian left the attendees speechless. Through a detailed look into the history of the Church and the Nicene Creed, he laid to rest any doubts that people would have from

recent “fiction thriller’s” as the Da Vinci Code. Father Muron affectively preached the fact that the Virgin Mary was the virgin mother of our Lord Jesus Christ and that all recent accusations are a product of mass media and money-driven profits.

Very Reverend Father Aznikian was followed by Very Reverend Father Barthev Gulumian, who spoke words of encouragement to the group gathered at St. Mary’s. The Very Reverend Father remarked as to the successes of the Armenian Church Youth Association and the work being done to bring youth to the table. Father Barthev also imparted his message of staying on the right course and the Christian path.

The gathering was closed in prayer at seven in the evening. The group of youth and adults used the time afterwards to network and discuss the future of the Armenian Church Youth Association. The next monthly meeting of the Youth Directorate Council is scheduled for June 11th at St. Sarkis Armenian Apostolic Church of Pasadena at 5:00 p.m. Subsequent gatherings will be taking place in San Francisco, Fresno, Orange County, and Hollywood.

For more information about the Armenian Church Youth Association please inquire within your respective Church. The ACYA is here to bridge the gap between young people and the Church; it exists as an organization, which unites the young people of the Churches of the Western Prelacy.